

ԲԱՅՆԵԳԻՆ

Ի Պուլկարիա
Տարեկ. 10 ֆր.
Վեցամս. 5 "

Արտասահման
Տարեկ. 12 ֆր.
Վեցամս. 6 "

Ամերիկա
2 Տոլ. 30 սենդ

ԿԱՆԻՍԻԿ

ՊԱՅՄԱՆԷ

Գրու թիւեր եւ
չեն տրուիր:

Հասցե
DIRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE.



ՇԱՐԱԹԱՀԱՆԴԵՍ . ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵԾՏՍԿԱՆ

Отговорникъ ГЕОРГИ ЯНТОВСКИЙ, Адвокатъ.

Ե ՏԱՐԻ

ԱՊՐԻԼ . 7 ՇԱՐԱԹ . 1901

ԹԻԻ 207

Ը Ն Տ Ա Ն Ե Կ Ա Ն

ՏԱՐՈՐԻՆԱԿ ԴԻԲԵՐԸ

Ազգայնաց ու կանանց տարօրինակ դիրքեր կան զոր չեմ կրցած ըմբռնել, և ըրած ջանքերուս հակառակ, չեմ կրցած տեսակ մը բացատրութեան մէջ ձուլել այն դիւրեր: 20էն 40 տարեկան մեծ աղջիկներ, նաև զաւկներու տէր մայրեր՝ շատ անգամ, զգացումներու, մտածման ու գաղափարներու տարօրինակութիւն մը կը ցուցադրեն զիրենք ուսումնասիրել ուզողներուն: Ասոնց ամենքն ալ թեթեալբարոյ անունով միայն կրնաս մկրտել, այս բառին անմեղ ըմաստովն: և սակայն ի՞նչ արտասովոր ու միամիտ դիրքեր են, ի՞նչ ծաղրելի ու տգեղ նկարագրերն են:

Նկարագրել փորձած կիներս անոնք են որ իրենց ամուսիններուն կը ներկայացնեն ինքզինքնին իրենց դեռատի ու դեռ մանկապարտէզ յաճախող աղջիկներուն միամտութիւնը, փափկութիւնն, անոնց պէս շոյուելու, փափայուելու պէտքն ունեցող, անոնց պէս կեանքի տըզիտութեան ու անփորձութեան մատնուած մէկ մէկ մանուկ: Ապշած կը զարմանամ բոլոր այն ամուսիններու վրայ որք գիտնալով հանդերձ թէ իրենց կիներն անգ իրենք, կը պատասխանեն անոնց միամիտ հարցումներուն, անոնց տղայամիտ պահանջներուն, և ի հարկին չեն ուստեր զանոնք որ իրենց պէս մարդ ըլլան, մտքի կորովն ունենան քիչ մը. և թէ երբ իրենք դուրսը արտաքին աշխարհին մէջ կը գործեն ու կը յոգնին, իրենց կէսը կազմող կիներուն ալ պարտքըն է արիանալ, իրենց մտքին բոլոր կարողու-

թիւները ժողովել, զսովներուն վրայ հսկել, կառավարել զանոնք: Այս բարի այրեր կը փորձուին հաւատալ թէ անգ ընող կիներն իրաւցնէ պղտիկ աշխատութենէ մը կը յոգնին, մեղուէն ու ճանճէն կը վախնան, թէ չունն ու կատուն իրենցմէ ծնած զաւկներէն աւելի կը սիրուին, թէ հոգեկան տանջանքներ ունին, թէ իրաւցընէ ամբողջ օրն հիւանդ են, թէ անպատճառ պէտք է տղու մը պէս չոյել ու գուրգուրալ անոնց վրայ, թէ անհրաժեշտ պէտք է այն գըլխարկն որուն համար անձնասիրութիւն չունեցող կիներն արցունք կը թափէ, թէ սիրտը կը կտորի եթէ ուզած տեղը չերթայ ու ամէն հաճոյքները չգոհանան. այդ ամուսիններ իրաւցնէ չեն գիտեր թէ ճամբան գացած ատեննին կնոջն ոտքը կը ցուի՝ կառքով վերադառնալու համար: Թէ այսօր շարժուման ո՞ր օրն ըլլալը չեն գիտեր, տղոց պէս չփանալու համար, բայց բարեբախտաբար շատ չեն այս գիբեր մեր մէջ:

Իսկ աղջիկներն՝ որք խորհելու և շարժելու եղանակով չեն տարբերիր պղտիկներէ, խորունկ սոսկում մը տածելով բոլոր այն բաներու մասին որք հարուստ և զուարթ չեն, մութէն կը վախնան և շատ լոյսէն կը խրտչին, փափուկ ու բուրդէ հագուստներու մէջ գլգլեակ հագնողներէն աւելի մօիլ կը կեղծեն, և չզարչներու մէջ ամառը կայրին. աղջիկներ որ կահաբեկին խոշոր աղմուկէն, և ձայներնին կը նրբացնեն, ու աւելի նրբանալու համար իւրաքանչիւր բառին ծայրը նուազական մասնիկ կը դնեն. անձրեւէն թրջիլնուն համար կուլան. և տակաւին ո՞ր մին թուեմ այն տեսակ մը անըմբռնելի ու անբացատրելի շարժումներէն՝ որք բացարձակապէս ծաղրելի կընեն մեր միամիտ կիներն ու աղջիկները. չեմ գիտեր կը կարծեն արդեօք թէ տարիքին գծած խորշումները դէմքին վրայ կրնան ծած-

կուրի մանկական ու ծաղրական շարժումներու ներքեւ:

Եւ չեմ ըսեր թէ կին մը պէտք չունի գուր-գուրանքի ու գորովի, չեմ ըսեր թէ կին մը պէտք չունի սիրուն ու վայելուչ զարդերու՝ գեղեցիկ ու հրապուրիչ երենալու համար. երբէք չեմ պահանջեր որ կինն առնական խոտով թիւն ու շարժումներ ունենայ. ընդհակառակն ամենէն աւելի հաւատացողներէն եմ որ կին մը որչափ գորով վայելէ, այնքան աւելի կազնուանայ, կը գիտնայ իր արժանիք, ու կը ջանայ փոխարինել այդ սիրոյն, բոլոր գուրգուրանք դառնալով իր տան մէջ իրեններուն համար: Կնոջ մը նրբութիւն, փափկութիւն, ազնուութիւն կը վայելեն, բայց ոչ ծաղրելի ըլլալու աստիճան նրբութիւն, և վրան խնդացնելու աստիճան փափկութիւն: Վերջապէս ըսել կ'ուզեմ թէ կեղծիք պէտք չէ. արդէն կնոջ իւրաքանչիւր շարժումներուն մէջ բնական վայելչութիւն մը կայ. չգիմեն ալ արհեստականին. բաւական է ինչ որ բնութիւնը շնորհած է իրենց. անոնց ընդհանուր խօսակցութեան ձայնը բաւական նուրբ է արդէն. ալ եթէ ջանք մը ընեն անկէ աւելի նրբանալու՝ տղգեղ կերևնայ. բնական նազանք մը կայ իրենց շարժումներուն, իրենց հասակին մէջ արդէն. ալ նորէն ջանք մը ծաղրելի կը դառնայ. կնոջ տըրուած է արդէն այրերէն աւելի փափուկ և երկչոտ ըլլալ, անոնցմէ աւելի պաշտումի ու սիրոյ պէտք ունենալ. երբ պէտք եղածէն աւելի հոգածութիւն ու արգահատանք, սէր ու գորով դըրաւելու միջոցներու դիմեն, վերջապէս իրենց դիմացինը կը ձանձրանայ ու տղու տեղ կը դնէ շիրենք: Ինչ չափ այդ կերպով պզտիկ աղջիկ դառնալուն մէջ: Կին մը որ իր ամուսնոյն քով պզտիկ աղջկան մը տպաւորութիւնը կը ձգէ, աղջիկ մը որ հասարակութեան աչքին տղայ մը կը նկատուի, ատենք պատուաբեր չեն իրենց. ու յանցանքը անոնց մեծերունն է որ լուրջ ընկճբունքներու մէջ կը թած չեն վանոնք: Դուք թերեւ բան մը կարծէք որչափ ատեն որ դեռատի էք կամ երիտասարդ, որչափ ատեն որ ամուսին մը ունիք ու ծնողք մը որ կրնան գոհացնել ձեր քմահաճոյքները. բայց կեանքին իւրաքանչիւր օրերն իրարու չեն նմանիր երբէք. այսօր կը սիրեն զձեզ, կը յարգեն թերեւ ձեր տարիքին ու ձեր գեղոյն համար եթէ այս վերջինն ալ ունիք. վաղը եթէ այս ամէնը կորսնցնէք, ու պակսին ձեր շուրջն այն մեծ ու զարմանալի համբերութիւնները, յոգալիք կըլլաք. իրաւցնէ, ճշմարիտ դժբախտները կեանքին, ճշմարիտ լըքեալներն եւ պարտեալները կեանքին: Սովորեցէ՛ք ուրեմն հիմակուրէն ճանչնալ աշխարհն իր մերկ իրականութեան մէջ. պատրաստուիլ անոր

քմահաճոյքներուն, գիտնալ թէ այսօր ևան ձեր շուրջը տարածուած ժպիտները վաղը կանհետին, ներողամտութիւն, համբերութիւն գեղեցիկ բաներ են. բայց չարաչար կերպով կը մեղադրեմ այն ծնողներն ու միա՛հիտ ամուսիններն, որք իրենց աղջիկներուն կամ կանանց մանկական տգէտ գաղափարներն ու բաղձանքները կը քաշալնեն: Սաստեցէ՛ք զանոնք իրենց թերութեանց մէջ. այս կերպով սիրած կըլլաք զանոնք, ու ապագան քիչ պատրանքներ պահած պիտի ըլլայ անոնց: Այս տղերք մասնաւորաց համար են միայն. աւելորդ չեմ դառնար այս խոստովանութիւնն ընել, վասն զի միեւնոյն ատեն լուրջ կիներու լէգէոններ կը ճանչնամ ես:

ԱՐՏ

ԱՉԳԱՅԻՑ

Վեհ. Կաթողիկոսը յատուկ կոնքակով եւ լանջախաչերով պատուեր է Մանչեսթըրի Հայոց Հոգեւոր Հովիւ եւ «Հայաստանեայց Եկեղեցի» կրօնական ամսաթերթի խմբագիր Արժ. Տ. Թորոս Քահանայ Զուգայեցին եւ Բարիզի Հայոց Հոգեւոր Հովիւ Արժ. Տ. Վառչապուհ քահանայ Քիպարեանը:

— Բաղէշի միսիօնար Տ. Ծօրճ հանգանակութեան մը ձեռնարկելով 50 ոսկի հաւաքեր է, որով Խնդրակատար վանքի ուղբանոցին համար կահագործութեան և գերձակութեան արհեստներուն վերաբերեալ գործիքներ և մեքենաներ գնուած են:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

«Հայեկի» 206 և «Իրաւունք» 25 թուոց մէջ կարգացի վանեցի Գալուստ Պօղոսեան ըստորագրութեամբ անձինս նկատմամբ մի գրութիւն:

Պ. Գալուստ Պօղոսեան պարզ գիւղացի մը ըլլալով հանգերձ, երբ իր մրամտութեան բոլոր ծանրութեամբը կրցեր է գիտնալ թէ իմ յարուցած խնդիրներս ընկերական ատեանի մը մէջ կարելի է քննել, ես ինքս իբրեւ 1888էն ի վեր այս խնդիրներով զբաղող մէկը բնականաբար

աւելի լաւ կը մըռնեմ այդ ընկերական առեւ-
նին պէտքը:

Ուստի ըսեք եմ եւ կը կրկնեմ թէ այդ
բռնի դրամ պահանջողները դատարկաշրջիկներ
են, թէ առանց օրինաւոր կաշմակերպութիւն
մը չէ՛ եւ ազգին վստահութեան երբէք արժանի
չէ՛:

Ասոնք եւ քոյր իր գիտցած խնդիրները
ինչ որ են քննելու համար կընդունին իր ա-
ռաջարկած ժողովը՝ պայմանաւ որ Իսաք Արմա-
խի ըսուած անձը միշտ պատրաստ գտնուի. որ-
մով եւ պիտի չլանին զբաղուիլ հակառակ իր
յայտարարութեան թէ ինք չը զիջանիր ինձմով
զբաղուիլ:

Գալուստ Պօղոսեան ինք յուզեց ընկերական
առեւնին խնդիրը եւ եւ կընդունին. իրեն կը մը-
նայ փախստականի մը ծիծաղելիութենէն ազա-
տելու եւ վատի մակդիրին չարմանանալու հա-
մար իր ըսածը իր ուղած ու հրատարակած ձե-
ւովը դարձադրել: Ապա թէ ոչ.

Ապա թէ ոչ, ընթերցողը թող դատէ:

ՊԱՆՏԱՍՏԱՐ ԵՈՎԱԶԱՆԵՍԵԱՆ

Յ. Գ. Ներկայէս մէյմէկ օրինակ ալ «Իրա-
ւունք»-ի եւ «Շարժումի զրկուած են հրատարա-
կելու խնդրանք»:

Նոյն

ՓՈՔՐ ԹՂԹԱՏԱՐ

X Քաղաք Տիրան Տիրանեան—Լաւ է, բայց
երբ Դուք եւ կամ Ձեր խումբէն մեկը չէք ուզեր
Ձեր բուն անունն ու մականունը մեզ ի՛նչպէս
առ ի ապահովութիւն, մենք ի՛նչ վստահութեամբ
կրնանք զանոնք հրատարակել:

ԿՍՄԻԹ

ՇՈՂԱԿԱԹ ՏՈՒՏՈՒԻՆ Գ. ՆԱՄԱԿԸ

Քրիստոս յարեալ ի մեռելոց, ամեն տարի պարով
հասնիք՝ հանդերձ պարեկամօք: Ըսածս էղաւ: Ազաները
խթումին իրիկունը մենք պիտիները կանչեցին ձայնաւոր
վարժապետին հետ պարը կէօրիւ ըրին քի, Զատիկին
օրերը շէնք շնորհք շարականները կարգացին, չէ նէ
մինակ մնալէն արթըն ծանր մարեր, կարգացածը չէր
հասկցուեր կոր: Խույլու խույլունտան վազ կէջմէզ կը-
սեն, «ես աս շապիկը չեմ հագնիր, մէկալը կը հագ-
նիմ» ըսելով նորէն ֆիլիզ մը հանել ուզեր է ամա, ա-
ղային մէկը՝ «արթըզ զիյասէ կէլիօրսըն, նէ՛ վերիբէլ-
սէ օնու կիլէճէքսին, իսթէր տուր իսթէր տուրմա» ը-
սելուն պէս եկէքնները ճուրը ինջեցուցեր է: Թոռնիկս
ըսաւ քի հիմա ալ խըրսը տղաքներէն կանոն էլեր. կար-
գացած վախթը պիլէ կէշ կէշ կառակէ կանիծէ էլեր:
Էյէր իրաւ է նէ՛ հէմ մեղք է հէմ մենք ամօթ բան է

ասիկա: Վարժապետ մըն ալ իրեն կիսուն վրայ կայնե-
ցունելու է քի՛ ատանկ ուհար ույմազ խելքին փչածը չընէ:

Մեռելոցին օրը էլայ կերեզմանատուն կացի. լե-
ցուն խալապալըն, մէկ տէրտէր մը կար. մէկալները
տուն օրդնների կացեր էն: Մէկ տէրտէրը ատ խալա-
պալընին ո՛ր մէկին պիտի հասնէր: Մէկը թեւ կը պոնէ,
մէկը բէշը կը բաշէ, մէկը յօրուքը կը շոյէ. հէր գա-
ֆատան պիտի սէս. —Տէր պապա իշիմ վար կիտէճէիմ,
էվէլ շու գերեզմանը օգուցուվէր: —Քէ՛ մեռնիմ տէր
պապա, տալուլ զուրնան դուռը մեզ պէքէմիշ կանէ,
արի մեր Մրտօին գերեզման օրհնի: —Է՛ ճանրմ, տա-
պէքէլէճէքմիլի, իսլիմ վազթը կէշէյօր: —Կարգիդ
խուրպան ըլլամ տէրպապաս, առաջ սա իմինս օրդնէ,
ճամբուդ վրայ է, կենալու վախթ չունիմ, չորպա վրայ
դրեր էմ, վախում ճուրը կը բաշէ: —Տէր պապա,
պիտի ալ բէս—մըխլա է՛թ, աճ աճընա իքի սաաթ տըր
պէքէլէյօրըզ: —Ինծի նայէ տէր պապա, փարան տալու-
ճըս կայներ էմ, սաֆրաս խալարմիշ կըլլայ կոր, սա
տալոնս կերեզմանին վրայ «հայր մեր էրկինք» մը ըսես
կօգտէ, չիւնքի էրգում ձգած է: —Պանա պապ տէրպա-
պա, շու պիլիմ րա հմէթի ծըմըն մեզարընը օգուցուլը
փարամըզը ալմալըսըն:

Իշթէ աս խարդաշտներին մէջ, զաւալը տէրտէրը
պիւսպիւթիւն բուսուլան շաշըմիշ ըրաւ, արթըն պաշ-
լայեց էկած տեղը կապելու: Էրկու թափգէին մէջ կե-
րեզման մը կօրհնէր կոր. չես հաւտար նէ սա հաթ բըռ-
նէ տէ բրօվա մը բրէ:

«Եւ ես խաղաղութեան օրհնութիւն եւ փառք, քան-
զի զքեզ օրհնեն իշխանութիւնք երկնից, փառք հօր,
յաւիտեանս ամէն. ալելուիա ալելուիա, կացցէ գշտոյ
ընդ աշմէ, զարգարեալ եւ պաճոյճեալ: Որդի, խաղա-
ղութիւն ամենեցուն, պրօսխուսմէ սսէ Աստուած. Յայնմ
ժամանակի պատասխանի ետ նոցա եւ ասէ, եկալք առ իս
ամենայն վաստակեալք. հոգոց հանգուցելոց, արա ար-
ժանի բաւութեան, յիշեա՛ աւուր մեծի գալստեան. օրհ-
նեալ տէր մեր եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, յա-
ւիտեանս յաւիտենից ամէն: Յիշեալ լիջիք, Տէրն մեր
անթառամ պսակին արժանացուցէ պի:

Իշթէ ասխտար: Ըսին քի՛ տէր պապին ճէպը
չիւրիւք է եղեր տէ պախըն բարաներու ծանրութենէն
ծակեր, էքէյի բարա ասդին անդին ցաներ է. աս հի-
սապով զաւալըն վրայ տուած կըլլայ:

Հիմա հախ չունիմ ըսելու քի մէկալ տէր պապա-
ներն ալ ան օրը հոն կտնուելու էին քի ամենուն ալ
կերեզմանը շէնքով շնորքով օրհնուէր, տուն-օրդնները
պիտի փախէր, քառսուն օր Զատիկ կը սեպուի. ամա
ինչ է, մեր ամէն գործին մէջ պակաս պան մը ընելու
ենք քի՛ սիրտերնիս ըրա հաթ ըլլայ:

Շիտակ զուրցող ՇՈՂԱԿԱԹ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԶԳԱՑՈՒՄԸ

(ՆՈՐԱՎԷՊ)

Տօթեցողը երբ ներս մտաւ այն տունէն, ուր գիշերանց հապճեպով կոչած էին զինքը հիւանդ մը դարմանելու համար, ուրուական մը թուեցաւ իրեն այն կինը, որ իրմէ երկու քայլ հեռու, ձեռքերը իրար միացուցած, աղաչական դիրքով մը կեցեր էր, գլուխը՝ յանցապարտի մը պէս՝ ծռած ուսին վրայ:

Պահ մը արիւնը սառեցաւ երակներուն մէջ, ու փայլակի մը արագութեամբ, մտրակուած երկվարներու պէս, չլիթայակերպ անցան տենդա-հար մտքին առջեւէն անցեալ քանի մը տարիներու պատահարները, արցունքներով լեցուն ա-մէնքն ալ ու կրակներով հրդեհուած: Յիշեց, ինչ որ հապիւ ժամ մը կը մոռնար օրական կեանքին մէջ, այն աղետալի արկածը, որուն զոհ գացեր էր երիտասարդութեանը ամենէն ազնոր տարիներուն, այն անոյշ հասակին մէջ ուր երազոտ հոգիի մը բոլոր միամիտ խանդովը կը հաւատար սիրոյ ու երանութեան:

— Ի՞նչ կուզէք ինձի՛, Տիկին:

— Տօթեցօր, զաւակս, ազատեցէ՛ք զաւակս:

— Տիկին...

Բայց միւսը ժամանակ չթողուց իրեն, պաղատալի մօտեցաւ անոր, ու լալու պէս ձայնով մը, որ աղէկէզ սրտէ մը կը բշխէր, «Գեղամ... բան մը մի՛ զուրցեր ինձի. գիտեմ, յանցաւոր եմ, բայց ոչորմէ զաւակիս որ մահուան վտանգի մէջ է»:

Խեղճը չկրցաւ աւելի առաջ տանիլ խօսքը, արցունքները հեղեղի պէս կը վազէին աչքերն ի վար, ու մահապարտի մը պէս բոլոր մարմնովը կը գողար:

— «Զաւակի՛դ, զաւակի՛դ ոչորմիմ...»:

Դէպ ի դուռը բնկրկեր էր, կարծես խոյս տալու համար այդ կինէն, որ իր զայրացած հոգւոյն առջեւ, շնորհ չէր գտներ բնաւ, մինչեւ իսկ յանուն զաւակին:

Երբ կռնակը հանդիպեցաւ պատին, որ հարկադրուեցաւ կասիլ, խոչնդոտի մը առջեւ ընդ-վըզուածի պէս, դուրս թափեց տարիներէ ի վեր կուրծքին տակ ժողովուած դառնութիւնը:

— Ահ, ասոր համար կանչեցիր զիս, կը յիշեմ ուրեմն անցեալը, բայց այն ատեն միայն երբ ուրիշ մը բան մը չի կրնար ընել քեզ, զաւակդ փրկելու համար... Ուր է ամուսինդ, ուր է այդ տղուն հայրը. խաբած նշանածի՞դ կը գիտես ուրիշ մը ունեցած զաւակդ մահուան

ձեռքէն խալըսելու համար: Աղւոր յիշողութիւն... Գիտես թէ ինչեր քաշեցի ձս, կը ճանչնամ այն անդունդը, ուր գլորեցիր զիս, դըր-թելով ինձի տուած երգումդ, յաւիտեան իմա ըլ-լալու... Հարուստի մը համար ոտնակոխ ըրիր իմ սէրս, կեանքս խորտակեցիր՝ աւելի պերճանքի մէջ ապրելու համար... տարիներով երջա-նիկ եղար, երբ ես յոսահատութեան ճիրաննե-րուն մէջ կը գալարուէի, ու հիմակ որ պէտք ունիս ինձի, հիմակ որ ամուսինդ անկարող է մահուան գէժ մաքառելու, սիրած մէկ էակիդ կեանքը ապահովելու համար կը կանչես զիս ու կուզես որ թուարաց վազեմ հոս ու ազատեմ այդ զաւակդ, որպէս զի սիրող չարիւնտի ու անիկա, անիկա՝ որուն համար խաբեցիր զիս, արցունքներու մէջ, սեւերու մէջ չտեսնէ զքեզ»:

— Անիրաւ եղայ, բայց Աստուած պատժեց զիս, Գեղամ, Աստուծոյ սիրուն համար, մի՛ յիշեր այդ ամէնքը, եթէ անցեալին համար պիտի չարչարես զաւակս, որ անմեղ է, ո՛հ, մեծ եղիր, բարի եղիր, զաւակիս մէջ մի զարներ զիս:

— Բայց դուն ամենէն մեծ ու վսեմ զգա-ցումիս մէջ զարկիր զիս, բոլոր էութեանս մէջ է որ զարկիր զիս... Ձէ, չեմ կրնար բարի ըլլալ քեզի համար, որ չար ու դաժան ըրիր զիս, նետելով կեանքս այնպիսի յորձանքի մը մէջ, որ ամենէն վսեմ նկարագիրներն անգամ կը վառ-թարանան:

— Ո՛հ, կը պաղատիմ քեզի, յանուն մօրդ խնայէ զաւակս...

— Մօրս անունովը է որ կը խնդրես ինձի՛ այդ բանը, բայց մօրս ալ մահուան պատճառ ե-ղար դուն, խեղճ մայրս գիտես թէ ինչպէս մե-ռաւ ան:

— Գիտեմ, ահ գիտեմ... լսեցի:

— Լսեցիր՝ բայց չը տեսար, ու ինձի պէս չանիծեցիր կեանքը... Քեզի պէս մայր մըն էր ան ալ, ու զաւակին սիրոյն համար, ճարահատած անոր փրկութենէն, յուսահատութեան ահաւոր տաղանայի մը մէջ... անձնասպան եղաւ:

— Ներէ՛, ներէ՛ ինձի, Գեղամ,

— Երբէ՛ք...

— Նայէ օտարութեդ կիյնամ, կը պաղատիմ քեզի, ես ալ շատ ցաւեր քաշեցի Գեղամ... Ձէ, երջանիկ չեղայ, ինչպէս դուն կը կարծես: Անփորձ աղջիկ մըն էր դեռ, երբ ծնողքս ստի-պեցին զիս անդուլթ ըլլալու հանգէպ քեզ, բայց յանցանքս չեմ թեթեւցներ, գիտեմ անիրաւ, շատ անիրաւ եղայ, Աստուած պատժեց զիս: Ա-մուսինէս սպասած սէրս չգտայ, խաբուեցայ իր-մէ, ինչպէս որ խաբեր էր քեզ, հինգ տարուան կենակցութենէ մը վերջը, որ դժողք մը եղաւ ինձ համար, եւ որու միջոցին խեղճս չարաչար

կը տանջէր զիս, ըրած ապօրէն արարքիս համար, որ մը, երեսի վրայ թողուց զիս ու գնաց... Առջինեկ արգէն երկու տարեկան հասակի մէջ հողին տուի. հիմակ այս երկրորդն ալ մահուան ճիրաններուն մէջ կը տանջուի... Անձամբ քու ոտքդ չեկայ, վախնալով որ կը մերժես մինչեւ հոս գալու: Այս գիւղին մէջ, ուր նոր տեղափոխուած եմ երկու ամսէի վեր, քեզմէ զատ ուրիշ բոլորի մը չկար, առաջին օրէն սիրով ու գովեստով խօսեցան ինծի քու վրադ: Ամէն բան աչքս առի, ու համարձակեցայ կանչել յաւ զքեզ, Աստուծոյ ապաւինած, յուսալով որ պիտի ներես ինծի... Իմ պատճառաւ, իմ ձեռքովս մեռած մօրդ սիրոյն համար ըլլայ...

Յանկարծ այն արցունքներով ու ցասկոտ ձայներով լեցուն սենեկին մէջ, ուր մօր մը սէրը ու խաբուած սիրտ մը ահաւոր կռիւ մը կը մղէին իրարու դէմ, մահուան փողահարի մը պէս հնչեց, սարսափելի հոնդիւն մը, որ մարդկային ձայնէ մը աւելի, վիզը կտրտուող անասունի մը վերջին խռնչիւնին կը նմանէր:

«Ձաւակս, զաւակս», գոչեց մայրը, խելակորոյս ոտքի ելլելով. բայց Գեղամ, անկէ առաջ, սլացել էր ձայնին եկած կողմը:

Պատահանութեան զգացումը, անմեղին ձայնէն արթնցած, մոռցունել տուած էր իրեն վրէժխնդրութեան զգացումը:

Սենեկին մէկ անկիւնը, չինական հողմարգելի մը ետեւ, պղտիկ մահճակալի մը մէջ, երկու տարուան մօտ տղեկ մը բերանը փրփուրներով լեցուն, աչքերը կապիճներէն զուրս, կարծես մահուան դէմ կը մաքառէր:

Գեղամ թեւերուն մէջ առաւ ողան, բայց անոր բերանը, ու մատը խոթելով կոկորդն ի վար, վարպետ շարժումով մը, մաշկային թաղանթներով լեցուն խռչափողը մաքրեց, ու դառնալով ողուն տաքնապեալ մօրը, որ անձկութեամբ ծռեր էր զաւակին վրայ, անոյշ ու մեղմ ձայնով մը, ըսաւ.

«Մի վախճաք, Տիկին, վտանգ չկայ»:

Կ. Ո.

Ծ Ի Ծ Ա Ղ

ՍԻՐՏԸ ԵՐԱԾ ԱՏԱՄՆԱԶՈՒՐԿ ՄԸ

Զօրփաղ ատամնաբոյժի հետ գործ ունենալու գիտարութիւնը ունեցած էք երբէք:

Այո, այդ անտանելի փորձանքը իմ գլուխս եկաւ: Պատմեմ տեսէք:

Փտտած քանի մը ակռայ ունէի, որոնք ոչ պատահաւ մը հանգիստ ճաշ ընել և ոչ ալ դիշերը հանդարտիկ քուն մը քաշելու միջոց կուտային: Ճարս ճարակա հատած, բարեկամի մը խորհրդով (սե «աաթ է եղեր») ատամնաբոյժին ելայ գացի:

— Գուգում Միւսիւ, ըսի, սա ակռաներուս դարման մը:

Երկար բարակ քննելէ յետոյ.

— Աստիք թախըմէկով քաշելէն զատ՝ ուրիշ ճար չկայ, կուզես նէ հուսա տեղը նստէ, շուտ մը լմնցնեմ:

Մէկ կողմէ ցաւէն տանջուելով և միւս կողմէ իր համբաւին վստահացած, պաշտօնական թիկնաթուին վրայ նստայ:

Եւ ահա, մահու եւ կենաց տաքնապալից վիրահատութիւն մը կատարելու պէս, լուրջ եւ խոժոռ կերպարանքով սկսաւ պողպատեայ գործիքներն իրար անցունել եւ ինծի մօտենալով.

— Բերանդ բաց նայիմ, ըսաւ. գլուխդ վեր բռնէ. քիչ մը աջիդ դարձիւր, մի՛ երերար, չըլլայ քի վախճաք. եւ... գործողութիւնը սկսաւ: Չա՛րթ:

— Ի՞նչ եղաւ, միւսիւ, հարցուցի դողահար:

— Եղբայր, զաթը սա ակռայիդ թապլան չիւրիւկ է եղեր տէ կոտրեցաւ:

— Էյ հիմա ի՞նչ պիտի ընենք:

— Այ հիմա բան մը չըլլար, չիւնքի զօռլամիշ ընեմ նէ լինտերդ իւֆիւնէթ բէյտահ կընեն: Անոր համար գալ շաբթու եկու տէ՛ ճարը նայինք:

Ու այցեգիրը վճարելով դուրս ելայ: Շուաբթ մըն ալ տանջուելէ յետոյ դարձեալ կը դիմեմ իրեն:

— Բարեւ միւսիւ... ի՞նչ պիտի ընենք:

— Էֆէնտիմ, քեզի տօսթճա բան մը ըսե՛մ, ատ ակռան քաշեմ ալ նէ, քեզի խեր չունի, մինչիւ որ անոր քովը հինգ, ու վերի խաթի եօթը հատ փտտածները չը հանեմ, ըռահաթ չես ընել:

— Ոտքդ պաղնեմ, վարպետ, ի՞նչ կընես, էյ աղէկ ա, ես անկէջ վերջը ի՞նչպէս խօսիմ եւ ինտո՞ր ճաշեմ:

— Ասամ՝ դուն ալ, հոգդ պիլէ մ'ընել, ես քեզի բնականէն հազար անգամ աղէկ, հէ՛մ ալ սոխի զարի պէս բարակ թախըմ մը չինեմ տէ, պարէ սինսիլէիս տուվա ընելով՝ գնա տոյա տոյա

խուլանմիշ եղիր • ինծի ատլը շանլը ուստա... կըսեն, հը՛, Դու իմին անունս լսեր ես:

— Էյ, քանի՞ կելլայ այդ ըսածդ:

— Մարդու բան չըսես նէ՛ 12 ակուային համար վեց նարթէն ոսկի կառնեմ, ան ալ՝ բարեկամի կողմէ եկած ըլլալուդ համար:

Հիմայ սկսայ խորհիլ ո՛ր, մէկ փոտած ակուան չը կըցող հանող սա չօլփաղ հէրիֆը 8-10 հատը ի՛նչպէս պիտի քաշէ. եւ յետոյ, իր շինելիք արհեստական ակուաները ի՛նչ ողորմելի բան պիտի ըլլան արդեօք: Բայց երբ յիշեք ծանօթ առածը, թէ «Աղլահ սէրս յէրիպ սէ սէրման առաքմաւրն», այն ատեն չէք մեղագրեր զի՛ երբ ըսեմ որ գառնուկի պէս համակերպելով՝ առաջքը նստայ: Ախ, ախ, բարո՛ւ, խերո՛ւ:

Ատամնաբոյժ Պարոնը, գործիքներն առնելով բերնիս վրայ նետուեցաւ: Նախ սկսաւ ակուաներուս եզերքը փորել, խառնել, լինտերս յոշոտել, ծակել, պատռել ու կտրել եւ իշխանաբար հրամաններ տեղալ. — «Թո՛ւք, ծծէ՛, հաղա՛, հը՛, չօլփաղ աիշճիի մը գացած ըլլայիր նէ հիմայ բերանդ խուռտուխաշ ըրած էր, ամա բաղդ ունիս էզեր ո՛ր իմ գիմացս ելար»: Վայ նաչար գլխովս հաստատական պատասխան կուտամ իր սոյն անձնագովութեան, որմէ յետոյ կը սկսի բո՛ւն գործողութիւնը կատարել, և ահա, չա՛թ, չը՛թ, վա՛յ, ամա՛ն չը՛թ, ճը՛գ, ը՛հ, չա՛թ, եւ լմնցաւ: Լմնցա՛ւ, ի՛նչ դիւրին է ըսել. սակայն բերանս: Անիկա մի՛ հարցներ: Սպանդանցի մանրանկար մ'է ալ հիմայ եւ խուռտուխաշ եղած միտերու վերանն մը: Ալ մնաք բարո՛ւ հացի կեղեւ ու բողկ, կաշին ու նուշ, անուշիկ խընձոր ու պատուական սերկեւել, հեռուէ՛ն միայն կընաս նայիլ պոծօլային ու քէպապին: Քիթդ կսկսի կզակդ համբուրել, լեզուդ կը թօթովէ, այտերդ կը խոռոչանան և կսկսին սիրահար գառնալ կակուղիկ թիրիթին, խաշլամային ու խավիթին, խայտառակ ըլլալու վախճը՝ կզուշանաս մարդու հետ սրիսը վիճաբանութեան բռնուիլ, «Զորն ասեմ կամ զորն խոստովանիմ»:

Լինտերս տեղաւորուելէ երկու շաբաթ ետքը, դարձեալ կերթամ ըստեմակի ատամնաբոյժիս, բայց այս անգամ, նոր լեզու ելած սղու պէս թօթովելով:

— Բալէվ, Մուշի կիլակոսեան, իչպէ՛ս էթ:

— Բաց նայիմ բերանդ, տեսա՛ր մի, իշտէ՛ սանկ ակուայ կը քաշեն. հէյ մաշալլահ, սա նայէ, լինտերդ շանիշիրի սէտիրի պէս տեղաւորուեր են: Նստէ՛ որ չափ առնեմ:

Նստայ, և տասը վարկեան ետքը շան գլխու մեծութեամբ տատ տաք կարմիր տեսակ մը խմոր բերելով՝ բերնէս ներս սկսաւ խոթել: Շունչս կտրեցաւ, արցունքներս սկսան աչքերէս

հեղեղի պէս վազել, թուք՝ կլլելու անկարող եղայ եւ բերնիս առատաղն ու գետնայարկը երեցան լմնցան: Հաւատաքննական այս ահռելի տանջանքը տասը վայրկեանի մը չափ տեւեց. կարծեցի թէ ալ եղած լմնցած է:

— Կեցի նայիմ, ըսաւ, մէյ մըն ալ չափ առնեմ որ սխալ բան մը չըլլայ:

Եւ կրկնուեցան միեւնոյն չարչարանքները:

Բայց ասոնց ամէնքը՝ տակաւին կրելիք փորձանքներուս նախատեսակը եւ կարգալիք անէծքներուս առաջին արարուածն է եղեր:

Երկրորդ անգամ ըլլալով բերնիս չափն առնելէ յետոյ, յանձնարարեց ինծի 3-4 օր վերջը գալ, որպէս զի փոփաւ ընէ:

Ես ըսեա, գլխուս զարնուած գառնուկի պէս համակերպող, ալ բանը գործը ընաւ: Դրի, և սուտ հիւանդ ըլլալով սկսայ տունը նստիլ և Սալմոս քաղել: Սակայն պիտի ընէք ո՛ր, արչափ ատամնաբուրկ մարդիկ, նոյն իսկ ծերեր կան, գէշ աղէկ՝ անոնք ի՛նչպէս կը խօսին ու կը տեսնուին: Ըսածնիդ շիտակ է, միայն թէ անոնք, երկար տարիներու խօսելու վարժութիւն մը ունենալով, ալ իրենց համար սովորական ու բընական բան մը եղած է: Մինչդեռ իմա անանկ չեղաւ: Հապա, մէկ անգամէն 12 հատ կիւզէլիմ ակուաներուս եմէյը մոնեւուն համար, բերնիս մէջ ահագին յեղաշրջում մը տեղի ունեցաւ, և որով դատաստարտուեցայ յանկարծական փեղքելութեան:

Հիմայ անանկ ենթադրեցէք որ, իմ արհեստս խօսիլ եղած ըլլայ, օրինակի համար՝ քարոզիչ կամ քեզկեանհար եմ: Երկու պարագային մէջ ալ՝ կէս մեռել մարդ մը կը սեպուիմ, որովհետեւ, արհեստս բանեցնելու համար պէտք եղած անհրաժեշտ գործիքը խանդարուած, եւ խռոստալաւ եղած է:

Ասոր հետ մէկտեղ, անգամ մը փորձենք: Քարոզիչ եմ, պիտի խօսիմ. ոտքերնիդ պագնեմ մի խնդաք: Կ'սկսիմ կոր...

— Բասէ՛ք (բացէ՛ք ըսել կուզեմ) Տհիմոտիօսի դասերէտէրօտ թլուխը — Ուսի ուսով հետեւինթ Արաթեալին խօսութեւուն, և ահա ինձ պատվէլ տուտայ հսւատասեալնելուն:

Եղա՛ւ այս խայտառակութիւնը, աղօթել կըսեն ասոր, թէ ոչ՝ դայթակղութեան պատճառ տալ:

Քիչ մ'ալ թէզկեահատարութիւնը փորձենք:

— Պուլուլուն էֆէնտիմ, նէ՛ ալա ֆաթխտալալը մըզ վալ, զալիֆ գուճաշլալը մըզ տա պուլունուլ. տըլ տըլ տըլ տըլ տըլ, ֆը՛ս ֆը՛ս ֆը՛ս ֆը՛ս, խանթարներով թուք:

(Շարունակելի)

ԳԻՄՄԷՆ

ԹԵՐԹՈՆ «ՀԱՅԵԼԻ» (14)

ՌԵՆԷ ՏԲ ԲՅՆ ԺԷ

ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐՈՒ ԳԵՏԸ

(ՊԱՐԲԱՐ-ՄԱՄՈՒՆԵ)



Զինք համակող գրգռուած այն աստիճան բազմապատկած էր, իր ուժը եւ իր էութենէն վանած էր՝ ֆիզիքական ցաւի ամեն զգացում, որ իր խոշտանգուած փոքր ձեռքերն հանած էր զանոնք բռնող հրկաթէ մամուլէն։ Դասիճին օգնականներէն մէկը գծաւարաւ կը յաջողէր անոր շարժումները զսպել։

— Ուրեմն վերջապէս կը խոստովանի՞ր, ըսաւ դատաւորը, լուծիւնը նորէն տիրելուն պէս ամբոխին մէջ, որ այս անակնկալ գէպքին վրայ խանդավառ ազդակներ արձկեր էր։

— Այո, ամեն բան կը խոստովանիմ, ամեն բան, կրկնեց Սոլ-Պրոտէ մոլորագին։

— Ի՞նչպէս գործեցիք այս ոճիրը, հարցուց Մէնկ, առանց ծածկելու ուրախութիւնը զոր կը պատճառէր իրեն այս անյոյս յաջողութիւնը։

— Ա՛լ չեմ գիտեր, շարայարեց զիւցւոյն աղջիկը շտապով, շէի սիրելի այն անձը զոր ինծի հետ կը կարգէին։ Պարտեզ գտցինք։ Ես խնդրած էի որ այս պըտոյտն ընենք կէս դիշերին։ Հոն, թոյն խնցուցի անոր ու դանակի հարուածով մը մեռուցի։ Ազատիները իրենց սենեակը քաշուած էին։

— Եւ այս հովահարը որ ձեր զոհին գիակին տակէն ելաւ։

— Այո հովահարը։ Ա՛հ, այո, կը յիշեմ։ Ի՞նչ է իր վերջին այցելութեանը մօրս տունը մոռցած էր զայն. իբրեւ իր մէկ յիշատակը կը պահէի. երբեք ձեռքէս չէի ձգեր... Խոյս տուած միջոցիս ստիպուեցայ թողուլ։

— Այսպէս, ձեր ըսածին նայելով, ի՞նչն չէ մարգասպանը եւ դուք իր մեղսակցութիւն չէք։ Միայն դո՞ւք էր յանցաւորը։

— Միշտիկ ես, միմիայն ես եմ։

— Ճշմարիտ չէ, կը ստեա, գոչեց նոյն պահուն հերարձակ կին մը որ, պահակներուն կարգը կտրելէ յետոյ, Սոլ-Պրոտէի վրայ վազած էր, զոր բազուկներուն մէջ առնելով համբոյրներով կը ծածկէր։

— Լուծիւն, հրամայեց Լէնկ, սաստիկ զայրացած։ Ո՞վ է այս կինը։

— Ո՞վ եմ ես, տէր դատաւոր, պատասխանեց նորեկը վիշտի անբացատրելի շեշտով մը, ես մայրն եմ այն անմեղին զոր կը չարաբէք։ Կերպնում որ կը ստէ, կը տեսնէք որ խելքը թռուցած է, չի հասկնար ըսածը։ Աղջիկս մարգասպան մը, իմ ամենասիրելիս զաւակս թունաւորի՞չ մը։ Ա՛հ, անիծեալ ըլլան անոնք որ ասանկ բան մը անցուցին միտուընուն ամենէն առաջ։ Աստուած պատժէ զանոնք՝ միայնակ ու զգուշի ծերութիւն մը տալով անոնց։

Այս բառերը կուղղուէին Լէնկի, զոր տիկին Լիուին ժամանումը յայտնապէս այլալուծ էր, վասն զի, օրէնքէն ստիպուելով ներկայ գտնուիլ ամբաստանեալներուն չարաբարանքին, ծերունին բանի մը վայրկեանէ ի վեր կը մտածէր թէ յիշաւի՞ իր դիմացն ունէր զաւակին ըսպանիչները։

— Լուծիւն, կրկնեց մանտարէնը դաժան ձայնով, որ անհամբեր էր այս տեսարանին վերջ մը դնելու։ Թող այս կինն իր աղջկան բով մնայ, բայց ամեն մարդ յարգանքով մտիկ ընէ վճիռը զոր օրինագիրքը կը հրամայէ ինծի արձկել, երկու յանցաւորներէ մէկուն խոստովանութենէն յետոյ։

Հանդարտութիւնը մէկէնիմէկ հաստատուած էր բազմութեան մէջ։ Կը հասկցուէր թէ տուամին վախճանը մօտ էր։

Մէնկ պահ մը ամփոփեց ինքզինքը, բանի մը բառ փոխանակեց դատաւորներուն հետ, իր առջեւ տրուած հատորներէն մէկը թղթատեց, և բանի մը վայրկեան ետքը, ծանր ձայնով մը սա բառերն արտասանեց։

— Մենք, Մէնկ-Լոն-Թի, երրորդ կարգի մանտարէն, որ այսօր Քանդոնի եղեւնագատ տունի նախագահի պաշտօնը կը կատարենք, հարցափորցելէ ետք Լէնկ-Թա-Լանկի սպանիչները դատարանին առջեւ, յանցաւոր կը հռչակենք զանոնք այս զգուշի ոճիրին։ Այն տանն գործադրելով մեր մեծ օրէնսգէտին օրէնքը, հրկուքն ալ մահուան կը դատապարտենք։ Լիու-Սիու անուանեալն որ խոստովանեցաւ իր յանցանքը, պիտի կախուի, եւ ի-թէ անուանեալն որ յամառեցաւ իր ուրացումներուն մէջ, յամր մահ պիտի կրէ։ Դատապարտեալները տանջանքի պիտի հաւաքուին երբ կոյսը, մեր կրկնային ու ամենաղօր տէրը, հրամայէ իր բարձր իմաստութեամբը։ Մեր խիղճին համաձայն դատեցինք։ Պահակներ, տարէք դատապարտեալներն եւ մինչեւ իրենց վերջին վայրկեանները թող այնպէս պահուին որպէս կը տրամադրէ օրէնքն ու մարդկութիւնը։

Ամբոխը այս դատավճիռն ընդունեց այն սովորական անտարբերութեամբ զոր Ծայրագոյն Արեւելքի ժո-

ղովուրդները կը տածեն մարդկային կեանքին նկատմամբ: Իրեն համար, տեսարանը վերջացած է. քիչ փոյթն է իրեն պատժի գործադրութեան օրը եւ եղանակը որով պիտի մեղմեցնեն անոնք զորս արդարութիւնը հարուածած էր:

Յամբ մահուան տանջանքը, որ շատ քիչ կը տրուէր, որ այլեւս ի գործ չի գրուիր, եւ զոր քիչ յետոյ պիտի նկարագրենք, հասարակութեան հետաքրքրութիւնն իսկ չէր արթնցուցած:

Իսկ երկու տարաբանտներն, որոց որերն այլ եւս հաշուած էին, երկուքն ալ չէին լսած իրենց դատաւրձիօրը:

Իրենց շուրջն անցած դարձածին անգիտակ, Սոլ—Պրոտէ ջլաձգօրէն կը հեծկտար իր մօր բազուկներուն մէջ, որուն աչուրները չէին զատուեր վիրաւոր աղջիկէն. եւ հակառակ խնամքներուն զորս ատենին բժիշկը կուտար, Ի—Թէ չէր սթափեր: Հոգին աւանդելու մօտ էր կարծես:

Սակայն դատաւորներն ու ժողովուրդը բաշուած էին ունկնդրութեան սրահէն եւ պահակները գոցած էին դուռները, երբ տիկին Լիու, որ կը պատրաստուէր աղջկանը ընկերանալ մինչեւ բանտ, զգաց որ ուսին կը վարնեն մեղմիւ:

Ետին դարձաւ:

Եւրոպացի մը կը գտնուէր ետին: Չինք ճնշող ցաւին հակառակ, խեղճ կինը չկրցաւ սարսափի շարժում մը զսպել:

Բայց անձանթը անանկ բարեսէր ժպիտ մը ունէր շուրթերուն վրայ որ կինը շուտով ապահովեցաւ:

Դեռ երիտասարդ մարդ մըն էր, բարձրահասակ, խելացի ու կորովի դիմագծութեամբ: Ժամանակ չձգեց որ խօսք ուղղուի իրին:

—Տիկին, ըսաւ Մարայերէն, տեսակ մը Ֆրանք լեզու զոր կը հասկնան եւ կը խօսին գրեթէ բոլոր բնակիչները Չինու հարաւակողմի ծովային նահանգներուն. մի՛ վհատիք: Ներկայ գտնուեցայ այս հրէշային դատաւարութեան եւ ձեզ չափ ապահով եմ ձեր աղջկան անմեղութեանը վրայ:

—Օ՛հ, շնորհակալ եմ, պարօն, շնորհակալ եմ, ըսաւ տիկին Լիու ձեռքերը միացնելով. բայց ի՞նչ ընել, աւա՛ղ:

—Շատ բան. գէթ այնպէս կը յուսամ: Մէկ ամսէն աւելի ունինք մեր առջեւ՝ անիրաւ վճռին գործադրութեն առաջ, վասն զի պէտք է որ հրամանը Բերինէն գայ: Վաղն առտու եկէք գտէք զիս անգլիական գործակալատունը: Նաւապետ Բերրինս հարցուցէք: Լենկ-

Թա—Լոնկի սպանիչը մենք պիտի գտնանք, կը խոստանամ:

—Աստուած լսէ ձայներնիդ, տէ՛ր: Վաղը կը տեսնուինք:

Եւ բազուկներուն մէջ բռնելով միշտ աղջիկը, բայց երեսը յուսոյ ճառագայթէ մը լուսաւորուած, Սոլ—Պրոտէի հետ բանտին ճամբան բռնեց, ուր Լենկի այրին մարդասիրաբար պիտի պահուէր, ինչպէս կը պատուիրէ Չինական օրէնքը մահապարտներուն համար:

Գալով խեղճ Ի—Թէի, հիւանդանոց փոխադրուած էր: Իր վրայ հսկող բժիշկը պատասխանատու կըլլար անոր կեանքին համար: Արդարութեան պիտի դարձունէր զայն ողջ կամ մեռած, այն օրն ուր պատժին հրամանը գար Բերինէ:

Ժ.

Նաւասպէտ Բերքիւնի յաւակագիծը

Անգլիական գործակալատունն ուր Բերքինս նաւապետը ժամագիր եղած էր տիկին Լիուի, կը գտնուէր, ինչպէս Եւրոպական նմանօրինակ միւս տաներկու հասաւորութիւնները, քանզոնի այն միակ արուարձանին մէջ որ այն ատեն բացուած էր օտարականներուն առջեւ:

Հոն, գրեթէ իրենց երկրին պէս էին, Չինական ոստիկանութեան հսկողութենէն զերծ, բայց ծանր տենդերու ենթարկուած որ առաջ կուգար կառավարութեան կողմէ իրենց թոյլած երկրէն, մօտ երկու հարիւր տարուան պայքարէ յետոյ:

Այս արուարձանն որ ատենօք ժանտաբեր ճահիճ մըն էր, կը տարածուէր Մարգարիտներու գետին եղբւրաց երկայնութեամբը, ժլատօրէն սահմանափակ միջոցի մը մէջ: Ուստի, գործակալատուններէն զատ, մեծաշուք ոճով անսահման շէնքեր, պատշգառներով ծածկուած եւ պարտէզներով շրջապատուած, մեր պատմութեան ատենը դեռ երեք փողոցներ կային. Չինաստանի հին ու նոր փողոցը եւ խալիբուն գոհհը:

(Շարունակելի)